

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ինստիտուտ), 2013 թվականին իրականացրել է ներքոհիշյալ աշխատանքները.

• Վերապատրաստման դասընթացներ

Հաշվետու տարում ինստիտուտն իրականացրել է ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների 800 ծառայողների (դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության առաջատար խմբի պաշտոն զբաղեցնող 61 և քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող 739 ծառայողներ) վերապատրաստում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող 235 ծառայողների վերապատրաստում:

Քրեակատարողական և ԴԱՀԿ ծառայողների վերապատրաստման դասընթացներն անցկացվել են համապատասխանաբար՝ ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի օգոստոսի 27-ի N 165-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 266-Ա հրամաններով հաստատված ծրագրերով:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներն անցկացվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի՝ 2006 թվականի հուլիսի 25-ի N 621-Ա (Իրավաբանական), 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N 915-Ա (Կարգավորման ազդեցության գնահատում) և 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 1080-Ա (Կոռուպցիայի դեմ պայքար) որոշումներով հաստատված ծրագրերով:

Ինստիտուտը 2012թ.-ի դեկտեմբերի 25-ից մինչև մարտի 25-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 269-Ա հրամանով հաստատված ծրագրով իրականացրել է նոտարի թեկնածուների նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթաց, որին մասնակցել են նոտարի երեք թեկնածու:

• Հատուկ ուսուցման դասընթացներ

Ինստիտուտն իրականացրել է ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների 2325 ծառայողների (դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր և առաջատար խմբերի պաշտոններ զբաղեցնող 330 և քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի

պաշտոններ զբաղեցնող 1995 ծառայողներ) հատուկ ուսուցում: Քրեակատարողական և ԴԱՀԿ ծառայողների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են համապատասխանաբար՝ ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի N 29-Ա և 2013 թվականի հուլիսի 16-ի N 161-Ա հրամաններով հաստատված ծրագրերով:

• Ուսումնամեթոդական, հրատարակչական աշխատանքներ

Ինստիտուտը մասնակցել է քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրերի մշակման աշխատանքներին:

Ստեղծվել են քրեակատարողական ծառայության գործունեության վերաբերյալ նոր եռաչափ անիմացիոն ուսումնական հոլովակներ և տեսաֆիլմեր, որոնք արդեն ներդրվել են ուսումնական գործընթացներում:

Տպագրվել է «Սոցիալական աշխատանքը քրեական արդարադատության համակարգում» ձեռնարկը և լույս է տեսել «Արդարադատություն» հանդեսի չորս համար:

Տպագրվել են նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի ժողովածուներ:

• Միջին մասնագիտական կրթություն

Իրավաբանական քոլեջը, որը կրթական չափանիշներին համապատասխան իրականացնում է քրեակատարողական ուղղվածության միջին մասնագիտական կրթություն, 2013 թվականի ընթացքում ունեցել է 3 շրջանավարտ:

2012 թվականի ընդունելության արդյունքում իրավաբանական քոլեջը համալրվել է 16 ուսանողներով:

• Փորձագիտական խումբ

Ինստիտուտի փորձագիտական խումբը՝ հատուկ մշակված աշխատակարգին համապատասխան, փորձաքննության են ենթարկել բազմաթիվ օրենքներ և այլ իրավական ակտեր, մասնակցել է տարբեր աշխատաժողովների և սեմինարների: Փորձաքննության արդյունքում կազմվել են փորձագիտական եզրակացություններ, օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ համապատասխան հիմնավորումներով:

Փորձագիտական խմբի կողմից կազմվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված մի շարք գանգատների վերբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումներ:

• Միջազգային համագործակցություն

2013 թվականի հուլիսի 18-ին Օդեսա քաղաքում Ինստիտուտի և «Օդեսայի իրավաբանական ակադեմիա» ազգային համալսարանի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

2013 թվականի հոկտեմբերի 14-ին՝ Երևանում, Լեհաստանի Հանրապետության «Կալիշի բանտային ծառայության կենտրոնական վերապատրաստման կենտրոն» և Ինստիտուտի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

Վերոնշյալ համաձայնագրերի արդյունքում կողմերը նպատակ են հետապնդում համատեղ կազմակերպել գիտաժողովներ ու սեմինարներ, համատեղ հրատարակել գիտական և գիտամեթոդական աշխատանքներ և այլն:

Ինստիտուտը, որպես լիիրավ անդամ, 2013 թվականի հունիսի 3-ից 9-ը, մասնակցել է Իռլանդիայի Հանրապետության Դուբլին և Պորտ Լոնդոն քաղաքներում կազմակերպված Եվրոպական քրեակատարողական ուսումնական կենտրոնների ակադեմիայի (EPTA) ամենամյա միջազգային ժողովին, որտեղ քննարկվել են տարեց դատապարտյալների պատժի կրման առանձնահատկությունները և նրանց հետ աշխատող քրեակատարողական ծառայողների ուսուցման յուրահատկությունները, ինչպես նաև քննարկվել է հեռավար (էլեկտրոնային) ուսուցման (e learning) ներդրման խնդիրներն ու առանձնահատկությունները:

Ինստիտուտի ներկայացուցիչները 2013 թվականի օգոստոսի 10-18-ը մասնակցել են Ամերիկայի Միացյալ Նահանգների թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից՝ «Ուսումնական ակադեմիաներ» թեմայով կազմակերպված դասընթացներին, որի արդյունքում մասնակիցների համար կազմակերպվել գիտագործնական դասընթացներ:

2013 թվականի դեկտեմբերի 4-8-ը Ինստիտուտի պատվիրակությունը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության պատիժների կատարման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի կողմից Ռյազան քաղաքում կազմակերպվող «Հանցագործություն, պատիժ, ուղղում» խորագրով առաջին միջազգային պենիտենցիար գիտաժողովին, որը նվիրված էր Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության ընդունման 20-րդ ամյակին: Ինստիտուտը համագործակցության նպատակով պայմանավորվածություններ է ձեռքբերել Ռուսաստանի դաշնության պատիժների կատարման դաշնային ծառայության գիտահետազոտական ինստիտուտի և Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության միջազգային իրավաբանական ինստիտուտի հետ:

Ինստիտուտի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 28-30-ը Ծաղկաձորի «Մարիոթ» հյուրանոցում անցկացվեց «Կալանավորների նկատմամբ խոշտանգումների և բռնությունների կիրառման արգելքը Հայաստանում և Վրաստանում» թեմայով համատեղ գիտաժողով, որին մասնակցում էին Վրաստանի ուղղիչ աշխատանքների և իրավական

օժանդակության նախարարության քրեակատարողական և փորձարարական ուսումնական կենտրոնի ներկայացուցիչները:

2013 թվականի նոյեմբերի 7-ին Կոնգրես հյուրանոցի Պիկասո դահլիճում տեղի է ունեցել Ինստիտուտի և ԵԱՀԿ երևանյան գասենյակի կողմից համատեղ կազմակերպված «Իրավաբանական ինստիտուտի զարգացման հեռանկարը՝ մարդու իրավունքների ուսուցման տեսանկյունից» կլոր սեղան քննարկումը: Միջոցառման ընթացքում ներկայացվեց Ինստիտուտի գործունեությունը զարգացման հեռանկարը: Միջոցառմանը մասնակցել են ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար՝ դեսպան Անդրեյ Սորոկինը, ներկայացուցիչներ ԵԱՀԿ երևանյան գրասենյակից, ԵԽ երևանյան գրասենյակից, ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակից, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունից, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամից (IRZ), Ֆրանսիայի, Գերմանիայի դեսպանատնից և այլ մարմիններից:

• Գիտագործնական և այլ Գործունեություն

2013 թվականի մարտի 21-ին Ինստիտուտի և Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Համաձայնագրով նախատեսվում է համատեղ կազմակերպել սեմինարներ, գիտաժողովներ և դասընթացներ, պատրաստել տեղեկատվական-վերլուծական նյութեր, ձևավորել իրավաբանական մասնագիտական գրադարանային ֆոնդ և այլն:

ՏՆՕՐԵՆ՝

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ